Հայտարարություն

Հայաստանի ՔՀԿ-ների Կառուցողական Երկխոսության Ցանցի

2017 թվականի նոյեմբերին Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև կնքվեց համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ)։

Համաձայնագրի 366-րդ հոդվածի ուժով ստեղծվելու է քաղաքացիական հասարակության հարթակ, որը կծառայի որպես հանդիպումների և կարծիքների փոխանակման հարթակ և կազմված կլինի Եվրոպական միության քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից, այդ թվում՝ Եվրոպական տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի անդամներից, և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, ցանցերի և հարթակների ներկայացուցիչներից։

Հայաստանի ՔՀԿ-ների Կառուցողական Երկխոսության Ցանցը այս գործընթացում կարևորում է հատկապես այն սկզբունքների անշեղորեն պահպանումը, որով կձևավորվի քաղաքացիական հասարակության հարթակը, դրանք են՝ **թափանցիկությունը, ներառականությունը և ռոտացիայի սկզբունքները:** Անշուշտ, վերը թվարկված սկզբունքների նախատեսումը ինքնանպատակ չէ. դրանք ենթադրում են հարթակի ձևավորման գործընթացում ուժերի համախմբում և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հիմնական դերակատարների մասնակցություն՝ համագործակցության և համերաշխության պայմաններում։

Հայաստանի ՔՀԿ-ների Կառուցողական Երկխոսության Ցանցը հայտ է ներկայացնում ակտիվորեն մասնակցելու և ընդգրկվելու ՀԸԳՀ շրջանակներում ձևավորվող քաղաքացիական հասարակության հարթակում, աջակցելու Արևելյան գործընկերության Հայաստանի ազգային պլատֆորմին՝ ստանձնելով հանձնառություն՝ ցուցաբերել փորձագիտական աջակցություն ՀԸԳՀ առանձին ոլորտներում հանրային քաղաքականությունների մշակման/բարելավման, դրանց հասարակական վերահսկողության իրականացման և գնահատման նպատակով։

Հայաստանի ՔՀԿ-ների Կառուցողական Երկխոսության Ցանց կառավարման խորհուրդ

«ՀամաՁարԿ» («Համայնքների զարգացման և մասնակցային կառավարման միավորում») կոալիցիա

«Հայաստանի գյուղատնտեսական դաշինք»

ՔՀԿ-ները հանուն կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացման կոալիցիա

«Հայկական կրթական ցանց»

«Հայկական բիզնես կոալիցիա»

«Աջակցություն պրոբացիային» ազգային ցանց

«Հանուն հավասար իրավունքների» կոալիցիա

«Վիններթ Հայաստան կանանց ռեսուրս կենտրոնների ցանց » կոալիցիա

Հաշմանդամություն ունեցող երեխաների հիմնախնդիրներով զբաղող միջմարզային կոալիցիա

Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա

Աշխատողների իրավունքների պաշտպանության հասարակական կոալիցիա

Հայաստանում սոցիալական գովազդի ինստիտուցիոնալ կայացման ու զարգացմանն ուղղված ՔՀԿ-ների կոալիցիա

ՀՀ-ում տեղական ինքնակառավարման համակարգի զարգացմանը և տեղական ժողովրդավարության ամրապնդմանն ուղղված կոալիցիա

Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանության ցանց

Իրավաբանների հայկական ասոցիացիա՝ Ցանցի քարտուղարությունը իրականացնող կազմակերպություն

Սույն հայտարությունը ընդունվել է Հայաստանի ՔՀԿ-ների Կառուցողական Երկխոսության Ցանց կառավարման խորհրդի հեռավար եղանակով գումարած նիստում՝ 2020 թվականի մարտի 19-20-ին:

***

Ծանոթագրություն:

Հայաստանի ՔՀԿ-ների Կառուցողական Երկխոսության Ցանցը ստեղծվել է 2019 թվականի փետրվարին Եվրոպական միության կողմից ֆինանսավորված ամենամեծ ծրագրերից մեկի՝ «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում (https://ccd.armla.am/): Ցանցը ներկայումս միավորում է 14 ոլորտային կոալիցիաների՝ շուրջ 250 ՔՀԿ-ների անդամությամբ: Նշված Կոալիցիաները ներկայացնում են տարբեր ոլորտներ, ինչպես օրինակ՝ արդարադատություն, մարդու իրավունքներ, էներգետիկա, գյուղատնտեսության, հանրային ֆինանսների կառավարում, տնտեսություն, բիզնես և այլն: